ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ» ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
2023 ԹՎԱԿԱՆ

Հարատև փոփոխվող աշխարհում կրթության դերն ու ազդեցությունը մնում է անգերազանցելի՝ որպես կայուն զարգացման և ներառական աճի ապահովման անկյունաքար:

Ելնելով առկա մարտահրավերներից և արդեն իսկ արձանագրված ձեռքբերումներից՝ «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Ծրագիր), որպես վերջնական նպատակ, սահմանվել է ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված, Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգի ձևավորումը, որը յուրաքանչյուրին կյանքի բոլոր փուլերում հնարավորություն կտա ստանալու իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն, և կհանրահռչակվի կրթությունը որպես հանրային բարիք՝ ապահովելով կրթության բոլոր շահակիցների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը, ձևավորելով ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը և մասնակցային ժողովրդավարության վրա հենվող հանրային համերաշխությունը:

Ծրագրի վերջնական նպատակի իրականացման համար մինչև 2030 թվականը սահմանված ռազմավարական ուղղությունները երեքն են՝ համընդհանուր ներառական սովորողակենտրոն և մասնակցային կրթական միջավայրի ստեղծում, կրթության արդյունավետության բարձրացում, կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացում ու արտահանում: Ծրագրի 2023 թվականի սույն հաշվետվությունը ներկայացված է նշված երեք ռազմավարական ուղղությունների շրջանակում իրականացված միջոցառումների տրամաբանությամբ՝ դրանք խմբավորելով ըստ ոլորտային նպատակների:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 1. Նախադպրոցական կրթության ոլորտում բովանդակության, մասնագիտական կարողությունների և որակի շարունակական զարգացում ու հզորացում

- *Նախադպրոցական հաստատությունների աշխատակազմի պարբերական վերապատրաստումների կազմակերպում՝ մեդիա գործիքների ու ՏՏ կիրառմամբ, այդ թվում՝ ծնողավարման դասընթացների, մանկավարժության և կառավարման նորարարական մոտեցումների կիրառման ուղղությամբ՝*

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թվականի մայիսի 31-ի N790-Ա/2 հրամանով փոփոխություն է կատարվել նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստման չափորոշչում և օրինակելի ծրագրում՝ ներառելով մեդիա գործիքների ու ՏՏ կիրառմամբ, այդ թվում՝ ծնողավարման դասընթացների, մանկավարժության և կառավարման նորարարական մոտեցումների կիրառման ուղղությամբ թեմաներ: Ընդհանուր առմամբ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստումներում ընդգրկվել են 2541 մասնագետներ, որոնցից շուրջ 1500-ը՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մեկնարկած նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստումների շրջանակում: Վերապատրաստում անցած նախադպրոցական կրթության անձնակազմի մասնաբաժինը կազմել է շուրջ 20%:

• *Նախադպրոցական հաստատությունների ղեկավարման իրավունքի նպատակով հավաստագրման մեխանիզմի գործարկում՝*

2022 թվականին նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացել է 391, իսկ 2023 թվականին՝ 263 հավակնորդ: 2023 թվականի դեկտեմբերի դրությամբ հավաստագրված տնօրեն ունեցող նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվը եղել է 425 է, ինչը կազմել նախադպրոցական ուսումնական հաստատությունների ընդհանուր թվի 47 %-ը: 2023 թվականի հունիսի 14-ին ընդունված «Նախադպրոցական կրթության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» N ՀՕ-217-Ն օրենքում ամրագրված է, որ անորոշ ժամկետով կնքված պայմանագրերով աշխատող նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենները հետագա պաշտոնավարման համար մինչև 2024 թվականի հունիսի 1-ը պետք է ապահովեն նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ունենալու պահանջը, որն ապահովելու նպատակով մինչև սահմանված ժամկետը պարբերաբար կանցկացվեն հավաստագրման քննություններ:

• *Նախադպրոցական հաստատություններում մասնագիտական կադրերի առկայության ապահովում՝ տրանսպորտային ծախսերի փոխհատուցման միջոցով՝*

Մշակվել և շրջանառվում է «Նախադպրոցական հաստատությունների մանկավարժական աշխատողների տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգի» նախագիծը, որը կհաստատվի 2024 թվականի 1-ին եռամսյակում:

• *Մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված համակարգի ներդրում՝ նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին տարակարգի շնորհման գործընթացի միջոցով՝*

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի մարտի 2-ի N16-Ն հրամանով հաստատվել է «Համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման և տարակարգ ստացած մանկավարժական աշխատողներին պետական բյուջեի միջոցների հաշվին հավելավճար տրամադրելու կարգը»: ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի որոշմամբ առաջին աստիճանի տարակարգ է շնորհվել 10 մանկավարժական աշխատողի: Տարակարգի շնորհիվ աշխատակիցները ստանում են 30-50% հավելավճար՝ պետական բյուջեի միջոցներից:

• *Նախադպրոցական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի շարունակական վերանայում՝ ուղղորդելով դեպի ուսումնառության վերջնարդյունքները՝*

ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N744-Ն որոշմամբ հաստատվել է «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը», որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը: Չափորոշչի ներդրման նպատակով, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի նոյեմբերի 16-ի հրամաններով հաստատվել են նախադպրոցական կրթական համալիր ծրագրեր՝ տարիքային բոլոր խմբերի համար: Վերոնշյալ ծրագրերը 2022-2023 ուսումնական տարում փորձարկվել են հանրապետության 60 նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Իրականացված մշտադիտարկման արդյունքում, նշված ծրագրերը լրամշակվել ու հաստատվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 19-ի հրամաններով: Փորձարկումը 2023-2024 ուսումնական տարում շարունակվում է՝ ներառելով 190 նախադպրոցական ուսումնական հաստատություն: 2023

թվականի հուլիս-օգոստոս ամիսներին «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից Երևան քաղաքում և ՀՀ բոլոր մարզերում ընդհանուր թվով վերապատրաստվել է 130 նախադպրոցական ուսումնական հաստատությունների 114 տնօրեն և 1055 մանկավարժական աշխատող:

Նպատակ 2. Նախադպրոցական կրթության կառավարման և ֆինանսավորման ծախսարդյունավետության ապահովում՝ այդ թվում մասնավոր ոլորտի ծառայությունների զարգացման միջոցով

- *Պետական բյուջեից համայնքային մանկապարտեզներում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԶԱՊԿՈՒ) երեխաների համար պայմանների ապահովման ֆինանսավորում՝*

ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N1169-Ն որոշմամբ հաստատվել է «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանելու մասին կարգը», համաձայն որի՝ պետական բյուջեի միջոցների հաշվին կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հաստատության մեկ սանի հաշվարկով ֆինանսավորումը իրականացվում է 2022 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններով հաստատվել են երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշները և 0-6 տարեկան երեխաների կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգերը:

2022 թվականին նախադպրոցական կրթության ոլորտում համընդհանուր ներառական կրթության համակարգը ներդրվել է 3 մարզերում (Տավուշի, Լոռու և Սյունիքի) և Երևան քաղաքում, իսկ 2023 թվականին՝ հանրապետության ողջ տարածքում:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է ողջ ուսումնական տարվա ընթացքում: 2023 թվականին նախադպրոցական հաստատություններում ուսուցման մեջ ընդգրկված՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող վկայագրված երեխաների թիվը կազմել է 893:

- *Պետական բյուջեից համայնքային մանկապարտեզներում սոցիալապես անապահով ընտանիքների, ինչպես նաև շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող երեխաների կրթության ֆինանսավորում՝*

ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 19-ի N1808-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացում են կատարվել ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի՝ «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդթվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանելու մասին» N1169-Նորոշման մեջ, համաձայն որի՝ «ֆինանսավորման բարձրացված չափաքանակ» տերմինը փոխարինվել է «նպատակային ֆինանսավորման չափաքանակ» տերմինով, փոփոխություն է կատարվել թիրախային շահառուների խմբերում՝ ըստ տարեթվերի:

2023 թվականի սեպտեմբերի 1-ից պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար նախադպրոցական կրթություն են ստանում նաև զինծառայող ծնողի, ռազմական գործողություններին մասնակցած ծնողի երեխաները, ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական

հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) կամ ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի երեխաները:

2023 թվականին նախադպրոցական հաստատություններում ուսուցման մեջ ընդգրկված զինծառայողի ծնողի (ծնողների) երեխաների թիվը կազմել է 4747:

Համաձայն վերոնշյալ փոփոխության՝ ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքների երեխաները պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար նախադպրոցական կրթություն կստանան 2024 թվականի սեպտեմբերի մեկից:

- *Նախադպրոցական ծառայությունների լիցենզավորման թափանցիկ և պարզ համակարգի ներդրում՝*

ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն որոշման մեջփոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1480-Ն որոշմամբ սահմանվել են նախադպրոցական ծառայություններ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման պահանջները: Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թվականի դեկտեմբերի 9-ի N81-Ն և 2023 թվականի հոկտեմբերի 31-ի N138-Ն հրամաններով սահմանվել են նախադպրոցական այլընտրանքային (բացառությամբ փորձարարական) և նախադպրոցական ծառայությունների ծրագրերի բովանդակությանը ներկայացվող պահանջները:

ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N808-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N1944-Ն որոշմամբ հստակեցվել են նախադպրոցական տարիքային խմբերով գործունեության թույլտվություն տալու, ըստ տարիքային խմբերի համակազմի սահմանային տեղերի թիվը փոփոխելու պահանջները:

- *Նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական ամբողջական համակարգի գործարկում՝*

Կրթության կառավարման տեղեկատվական ամբողջական համակարգի գործարկման նպատակով «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2023 թվականի ընթացքում կազմակերպվել են «Նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի» գործարկմանն ուղղված վերապատրաստումներ հանրապետության շուրջ 1100 պետական (նախակրթարան) և համայնքային նախադպրոցական ուսումնական բոլոր հաստատությունների՝ թվով 1197 տնօրենների և համակագի գործարկման համար պատասխանատու մասնագետների համար:

2023-2024 ուսումնական տարում համակարգը գործարկված է, տվյալները հավաքագրվում են:

Նպատակ 3. 0-5 տարեկան երեխաների բոլոր խմբերի համար նախադպրոցական ծառայությունների ծածկույթի ամբողջական ապահովում գյուղական և քաղաքային համայնքներում

- *Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների քարտեզագրում, ըստ քարտեզագրման արդյունքների հիմնանորոգում և վերակառուցում՝ ստեղծելով տարբեր կրթական կարիքներ ունեցող երեխաների պահանջներին համապատասխանող և անվտանգ միջավայր՝*

2023 թվականի դեկտեմբերի դրությամբ հիմնանորոգվել և վերանորոգվել է 47 նախակրթարան և 45 մանկապարտեզ:

Նախադպրոցական ծառայություններ չունեցող համայնքներում, ներառյալ ազգային փոքրամասնությունների կոմպակտ բնակության վայրերում, նախադպրոցական հաստատությունների, այդ թվում՝ այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրում՝

29 բնակավայրում ստեղծվել են նախակրթարաններ: Նախադպրոցական այլընտրանքային ծառայություններ են ներդրվել 27 բնակավայրում: 2023թ. ընթացքում նոր կառուցված նախադպրոցական հաստատությունների թիվը կազմում է՝ 13 մանկապարտեզ և 6 նախակրթարան:

Նախադպրոցական ծառայություններ չունեցող բնակավայրերի թիվը հասցված է 201-ի՝ 2021 թվականի 229 նախադպրոցական ծառայություններ չունեցող բնակավայրերի թվի նկատմամբ:

ՀՀ կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների և 500 մանկապարտեզների» ծրագրի իրականացման շրջանակներում համայնքների մեծամասնությունում նախատեսվում է ստեղծել կրթահամալիրներ, որոնք կներառեն նաև նախադպրոցական ծառայություններ: Ներկայում նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում մինչև 2026 թվականը դրանք հիմնելու համար:

- *Նախադպրոցական հաստատություններում աղետների դիմակայունության և ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու պայմանների ապահովում և կարողությունների զարգացում՝*

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Երևան քաղաքում և հանրապետության 10 մարզերում գործող նախադպրոցական հաստատությունների մասնաբաժինը, որտեղ մշակված և հաստատված են աղետների ռիսկերի կառավարման պլանները, կազմում է 56%:

- *Նախադպրոցական հաստատություններում զարգացնող միջավայրի ապահովում՝ ուսումնական գույքի, դիդակտիկ նյութերի, զարգացնող խաղերի շարունակական արդիականացման միջոցով՝* Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 500 նախադպրոցական ուսումնական հաստատություններից շինարարական աշխատանքներն ավարտվել են 145-ում, որոնցից 20-ը ապահովված է զարգացնող միջավայրով: Միևնույն ժամանակ, 2023 թվականին հավաքագրված տվյալների հիման վրա կարիքների վերլուծության արդյունքում 46 հաստատության ուսումնական գույքի ձեռքբերման գործընթացը մեկնարկել է:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 1. Հանրակրթության ոլորտում բովանդակության, մասնագիտական կարողությունների և որակի շարունակական զարգացում և հզորացում, ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացում

- *Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի շարունակաբար վերանայում՝ ուղղորդելով դեպի ուսումնառության վերջնարդյունքները, ուսուցչի և դպրոցի ինքնավարության և մասնակցայնության մեծացումը և ստեղծարարության խթանումը՝*

2023-2024 ուսումնական տարում ՀՀ բոլոր ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում նոր չափորոշչի ներդրման նպատակով հաստատվել են առարկայական չափորոշիչները և ծրագրերը:

2023-2024 ուսումնական տարում ՀՀ բոլոր ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում իրականացվել է նոր չափորոշչի ներդրում: Այդ նպատակով վերապատրաստվել են բոլոր դպրոցների տնօրենները և տնօրենների տեղակալները, ուսուցիչները:

Տավուշի մարզում փորձարկվելուց հետո 3-րդ, 6-րդ, 8-րդ և 11-րդ դասարանների առարկայական չափորոշիչները և ծրագրերը լրամշակվել, հաստատվել ու ամբողջությամբ ներդրվել են Տավուշի մարզի ուսումնական հաստատություններում: ՀՀ Տավուշի մարզի ուսումնական հաստատություններում իրականացվել է առարկայական չափորոշիչների և ծրագրերի փորձարկում՝ 1-ին, 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում:

Միևնույն ժամանակ, հանրակրթության պետական չափորոշչի ներդրման շրջանակում 2022-2023 և 2023-2024 ուսումնական տարիներին Տավուշի մարզում գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N1602-Ա/2 հրամանով հաստատված «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացի փորձնական չափորոշիչն ու ծրագրերը: Հանրակրթության նոր չափորոշչի համաձայն, մասնագիտական կողմնորոշման խմբակները գործելու են հանրակրթական բոլոր դպրոցներում՝ 8-11-րդ դասարաններում:

Միաժամանակ ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 31-ի N1461-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել հանրակրթության նոր պետական չափորոշչում, հանրակրթական ծրագրերի ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքում և ուսումնական պլանի կազմման կանոններում, վերանայվել է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքները:

2024-2025 ուսումնական տարում՝ ՀՀ բոլոր ուսումնական հաստատությունների 3-րդ, 6-րդ, 8-րդ դասարաններում, և 2025-2026 ուսումնական տարում՝ 11-րդ դասարաններում նոր չափորոշչի ներդրման նպատակով, առարկայական չափորոշիչները և ծրագրերը հաստատվել են:

- *Ուսումնական նյութերի, այդ թվում՝ դասագրքերի, մշակման գործընթացի վերաբերյալ օրենսդրական հիմքերի սահմանում՝ ապահովելով ճկունություն և մրցակցություն, բարելավելով հեղինակային իրավունքի դաշտը՝*

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի հունիսի 9-ի «Հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը սահմանելու մասին» N20-Ն հրամանը շարադրվել է նոր խմբագրությամբ: Նշված հրամանում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է դասագրքերի ստեղծման գործընթացը լավարկելու, փորձաքննություն իրականացնող մասնագետներին ընդգրկելու վերաբերյալ կարգավորումները վերանայելու անհրաժեշտությամբ:

Փոփոխությունները հաստատվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 167-Ն հրամանով:

- *Հանրակրթական դասագրքերի վերահրատարակում՝ վերանայված առարկայական չափորոշիչներին, ծրագրերին և սահմանված ստանդարտներին համապատասխան՝*

Վերանայված առարկայական չափորոշիչներին, ծրագրերին և սահմանված ստանդարտներին համապատասխան ստեղծվել ու վերահրատարակվել են հանրակրթական առարկաների ներքոնշյալ դասագրքերը՝

2023 թվականին ստեղծվել են 2-րդ դասարանի 8 անուն դասագիրք, 5-րդ դասարանի 9 անուն դասագիրք, 7-րդ դասարանի 13 անուն դասագիրք, 10-րդ դասարանի 10 անուն դասագիրք:

2024 թվականին դասագրքերի ստեղծման նպատակով հայտարարվել է դրամաշնորհային մրցույթ ներքոգրյալ դասարանների համար. 2-րդ դասարան՝ 1 անուն դասագիրք, 5-րդ դասարան՝ 4 անուն դասագիրք, 7-րդ դասարան՝ 6 անուն դասագիրք, 10-րդ դասարան՝ 11 անուն դասագիրք, 3-րդ դասարան՝ 12 անուն դասագիրք, 6-րդ դասարան՝ 12 անուն դասագիրք, 8-րդ դասարան՝ 20 անուն դասագիրք:

• *Ուսուցիչների մասնագիտական առաջխաղացման, ներառյալ ատեստավորման, հնարավորությունների ընդլայնում՝ փոխկապակցելով այն աշխատանքի արժանապատիվ վարձատրության մեխանիզմների և մասնագիտական չափանիշների հետ՝*

ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների համաձայն՝ կամավոր ատեստավորման արդյունքում 70-79, 80-89, 90-100 % արդյունք ցուցաբերած ուսուցիչները համարվում են ատեստավորված, հավելավճարը հատկացվում է համապատասխան %-ի չափով, փոխվում է նաև դրույքաչափը՝ սահմանվելով 200.000 դրամ՝ մեկ դրույք զբաղվածության համար, որի նկատմամբ կիրառվում է համապատասխան չափով հավելավճարը: Կամավոր ատեստավորման գործընթացում ուսուցիչների համար բարելավող նորմեր նախատեսող կարգավորումների շրջանակներում 60-69% արդյունք ցուցաբերած ուսուցիչները ունեն դրույքաչափի փոփոխություն՝ առանց հավելավճարի հատկացման: 2023 թվականի կամավոր ատեստավորման արդյունքում հանրակրթական դպրոցի հավելավճար ստացող ուսուցիչների մասնաբաժինը հասցվել է 13.2%-ի: Երեք տարիների ատեստավորման արդյունքում վարձատրության բարձրացում ունի ընդհանուր առմամբ 3830 ուսուցիչ, որոնց վարձատրությունն առնվազն կրկնապատկվել է:

Ուսուցիչների տարակարգի մեխանիզմը կապակցվել է ուսուցչի դասավանդման հմտություններին, նոր մեխանիզմով տարակարգ է ստացել 101 մանկավարժ: Տարակարգի և կամավոր ատեստավորման համակարգերի միջոցով առկա են 400.000-ից մինչև 600.000 դրամ վարձատրություն ստացող ուսուցիչներ: 400.000 դրամ և ավելի աշխատավարձ է արդեն ստանում շուրջ 220 ուսուցիչ:

• *Ուսուցչի դրույքաչափի և աշխատանքային նկարագրի վերանայում՝ նվազեցնելով վերջիններիս վարչական աշխատանքի ծավալը և հնարավորություն ստեղծելով առավելագույնս մանկավարժական գործունեությամբ զբաղվելու համար՝*

ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի՝ «Հանրակրթական ուսումնական հաստատության եվ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին» N216-Ն որոշմամբ ուսուցչի գործառույթների շրջանակն ընդլայնվել էր, և պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթները ենթակա են նրա կողմից պարտադիր կատարման: Ուստի պարտադիր դասավանդվող աշխատաժամանակից դուրս ուսուցիչների մասնագիտական զարգացման, մասնագիտական գործունեությունը բարելավելու, տարրական դասարաններում դասավանդողներին նոր չափորոշչի ներդրմամբ պայմանավորված՝ բնութագրող գնահատմանը հատկացվող ժամանակահատվածը հաշվի առնելով, վերանայվել է հաստատությունում դասավանդողների դրույքի վերաբերյալ կարգավորումները, հիմնական և ավագ դպրոցների դասավանդողների համար սահմանվել է շաբաթական 20 դասաժամ, տարրականում՝ 18 դասաժամ: Փոփոխությունները կատարվել են ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N1713-Ն որոշմամբ:

• *Հանրակրթական ուսումնական հաստատությունների աշխատակազմի պարբերական վերապատրաստումների իրականացում, այդ թվում՝ մանկավարժության և կառավարման նորարարական մոտեցումների, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ՝*

ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի հերթական ատեստավորման կարգը հաստատելու և տարածքային հանձնաժողովների ստեղծման և գործունեության կարգը սահմանելու մասին» N167-Ն որոշման համաձայն, իրականացվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների ատեստավորման գործընթացը: Սահմանված կարգի համաձայն՝ յուրաքանչյուր տարի ուսուցիչը, ըստ իր մոտ բացահայտված մասնագիտական զարգացման կարիքի, մասնակցում է վերապատրաստումների: Վերապատրաստումների արդյունքում անհրաժեշտ չափով կրեդիտներ

հավաքելուց հետո ուսուցիչն ատեստավորվում է: Քննարկման փուլում են կարիքի գնահատման չափանիշները, ինչպես նաև նոր ձևաչափով վերապատրաստման գործընթացի իրականացումը:

Նախագիծը շրջանառվում է: Կարգի կիրարկումը նախատեսվում է 2024 թվականին:

- *Գյուղական մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների և ԲՏՃՄ առարկաների ուսուցիչների հավելյալ խրախուսման մեխանիզմների ներդրում՝*

Հաստատվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «1146. Հանրակրթության ծրագիր» ծրագրի «12015. ՀՀ պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկական առարկաների) դասավանդող ուսուցիչների համար վարձատրության բարձրացված հստակ չափաքանակի սահմանում» միջոցառման ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N108-Ն և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի օգոստոսի 7-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «1146. Հանրակրթության ծրագիր» ծրագրի «12016. ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 սովորող ունեցող պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին լրավճարի սահմանում» միջոցառման ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 103-Ն հրամանները:

Գյուղական մինչև 100 սովորող ունեցող դպրոցների և ԲՏՃՄ առարկաների դասավանդող ուսուցիչների պահանջարկի լրացման արդյունավետ գործիքակազմը ներդրված է: 2023 թվականի սեպտեմբեր ամսից գյուղական մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների ընդհանուր թվով 3240 ուսուցչի վարձատրությունը բարձրացվել է՝ դրույքաչափն ավելացել է միջինում 71.700 դրամից հասնելով 115.300 դրամի: 25%-ով բարձրացել է ԲՏՃՄ առարկաներ դասավանդող շուրջ 8355 ուսուցչի աշխատավարձը՝ շուրջ 32.000 դրամով:

Վերոնշյալ երկու ծրագրերի նպատակն է՝ խրախուսել ուսուցիչների մուտքը հատկապես գյուղական բնակավայրերի փոքր համակազմ ունեցող ուսումնական հաստատություններ՝ համալրելով թափուր հաստիքները և բարձրացնելովաշխատանքի գրավչությունը դպրոցում՝ապահովելով սովորողների կրթության իրավունքը:

- *Մանկավարժի որակավորման ճկուն մեխանիզմների մշակում և ներդրում, այդ թվում՝ երկակի որակավորմամբ մանկավարժների պատրաստում՝*

Իրականացվել են օրենսդրական փոփոխություններ՝ ուսուցիչների պակասը լրացնելու և թափուր տեղերը լրացնելու նպատակով: Մասնավորապես հեշտացվել է բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձանց մուտքը դպրոց: Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի՝

առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում, ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաև՝

1) տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող և տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը,

2) բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը՝ աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով:

Պահանջվող 30 կրեդիտ շնորհող դասընթացը կարող է կազմակերպել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունը կամ բարձրագույն

ուսումնական հաստատությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրով (մոդուլով):

2023 թվականին նման դասընթաց իրականացվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական, Վանաձորի Հ.Թումանյանի անվան և Գորիսի պետական համալսարանների, ինչպես նաև «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի կողմից: 30 կրեդիտ ստացած ուսուցիչները կարող են մասնակցել ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթներին:

Ինչպես նաև 2023-2024 ուստարում ներդրվել և իրականացվել է երկակի որակավորում շնորհող /բակալավրի աստիճանում/՝ Մաթեմատիկա-ֆիզիկա, Մաթեմատիկա-ինֆորմատիկա, Կենսաբանություն-քիմիա, Աշխարհագրություն-բնագիտություն, Անգլերեն-գերմաներեն, Անգլերեն-ֆրանսերեն, Անգլերեն-ռուսերեն մասնագիտություններով ընդունելություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում և Վ.Բրյուսովի անվան համալսարաններում:

Ըստ մրցույթի արդյունքների՝ Մաթեմատիկա-ֆիզիկա մասնագիտությամբ ընդունվել են 6 /անվճար/, Մաթեմատիկա-ինֆորմատիկա մասնագիտությամբ՝ 5/անվճար/, Կենսաբանություն-քիմիա մասնագիտությամբ՝ 3/անվճար/, Աշխարհագրություն-բնագիտություն՝ 0, Անգլերեն-գերմաներեն /2 անվճար, 21 վճարովի/, Անգլերեն-ֆրանսերեն /2 անվճար, 18 վճարովի/, Անգլերեն-ռուսերեն /5 անվճար, 9 վճարովի/ ուսանողներ:

Նույն մասնագիտություններով նախատեսվում է ընդունելություն նաև 2024-2025 ուսումնական տարվա համար, հաշվի առնելով նաև, որ Մաթեմատիկա-ֆիզիկա, Մաթեմատիկա-ինֆորմատիկա, Կենսաբանություն-քիմիա, Աշխարհագրություն-բնագիտություն մասնագիտությունները, որպես պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող մասնագիտություններ, ներառված են այն ցանկում, որոնցով սովորողներին տրամադրվում է պետական կրթաթոշակ (70.000-77.000 դրամ), ամենայն հավանականությամբ ընդունելության ցուցանիշները աստիճանաբար կբարելավվեն:

Ներկայում մանկավարժի մասնագիտության նկատմամբ ոչ բավարար հետաքրքրվածությունը, մանկավարժական բուհեր դիմելիության ցածր ցուցանիշներն ու ուսուցիչների պակասը համալրելու առկա խնդիրները հաշվի առնելով, ներկայում բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկում նախատեսվող այս լրացումը դրական ազդեցություն կունենա թե՛ ուսուցիչների ամբողջական ծանրաբեռնվածության ապահովման և թե՛ վարձատրության բարձրացման առումով, կնպաստի միջառարկայական և վերառարկայական կապերի սերտացմանը, ինչն էլ հանրակրթության նոր չափորոշչի պահանջ է:

Բուհական համակարգում երկակի որակավորմամբ առաջին շրջանավարտ մանկավարժները կարող են հավակնել աշխատանքի 2027 թվականին:

- *Ուսուցիչների նպատակային ուսուցման, ինչպես նաև հեռավոր համայնքներ գործուղման ծրագրերի և ընթացակարգերի վերանայում*՝

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը լրացվել է նոր դրույթով, որի արդյունքում առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը նույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում, ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաև ուսուցչի որակավորում շնորհող բարձրագույն ուսումնական հաստատության առնվազն բակալավրի կրթական ծրագրով ուսումնառող ավարտական կուրսի ուսանողը՝ գյուղական բնակավայրի ուսումնական հաստատությունում աշխատելու նպատակով, որի համար աշխատանքային պայմանագրով նախատեսված ժամանակահատվածը կհաշվարկվի որպես աշխատանքային ստաժ:

ՀՀ մարզերում տեղակայված հաստատությունների այն ուսուցիչներին և սաներին, որոնց փաստացի բնակության վայրը տարբեր է (դպրոցի հեռավորությունը իրենց բնակության վայրից ավելի է 5 կմ-ից), տրամադրվում է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N47-Ն հրամանի համաձայն: Հրամանում կատարվել է փոփոխություն, որը հաստատվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 27-ի N136-Ն հրամանով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 14-ի N40-Ն հրամանով սահմանված էր, որ համապատասխան մասնագետները գործուղվում են սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատություններ: Սույն հրամանում կատարվել է փոփոխություն՝ գործող կարգավորումը «Հանրակրթության մասին» օրենքին համապատասխանեցնելու նպատակով: Փոփոխությունը պայմանավորված է նաև մարզերի դպրոցներում առկա մանկավարժների մեծաթիվ թափուր հաստիքները համալրելու անհրաժեշտությամբ: Վերոնշյալ փոփոխությունը հաստատվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի նոյեմբերի 16-ի N140-Ն հրամանով:

ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի «2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիրը հաստատելու մասին» N1756-Լ որոշման շրջանակներում, 2023 թվականի հոկտեմբերի 16-ից գործարկվել է https://kadrer.emis.am/ հարթակը: Սույն հարթակում 2023թ. հոկտեմբերի 16-ի դրությամբ առկա է եղել ուսուցչի 1422 թափուր հաստիք, որոնցից դեկտեմբերի դրությամբ մնացել է թափուր 621-ը: Հայտագրումը նախատեսված է իրականացնել 6 ամսվա ընթացքում:

Մարզերի դպրոցների մանկավարժների թափուր հաստիքների համալրմանն է ուղղված նաև էլեկտրոնային դասավանդման հնարավորությունը: Էլեկտրոնային դասավանդում իրականացվում է ՀՀ 91 գյուղական դպրոցներում, որի շահառու սովորողների թիվը 5420 է: Էլեկտրոնային դասավանդում իրականացնում է 237 ուսուցիչ: Շաբաթական կտրվածքով իրականացվում է 1652 ժամ էլեկտրոնային դասավանդում:

- *Նպատակային ծրագրերի մշակում և իրականացում՝ Սփյուռքի ներուժը, ինչպես նաև մասնավոր ոլորտի որակյալ կադրերին, այդ թվում՝ ԲՏՃՄ ուղղությամբ, հանրակրթական հաստատություններում դասավանդման գործընթացում ընդգրկելու նպատակով՝*

ԲՏՃՄ ուղղությամբ հանրակրթական հաստատություններում դասավանդման գործընթացը բարելավելուն ուղղված Ծրագրի միջոցառման հիմնական շահառուները՝ ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների /«Աշխարհագրություն», «Հայաստանի աշխարհագրություն», «Բնագիտություն», «Բնություն», «Կենսաբանություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Ինֆորմատիկա», «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն»/ դասավանդող ուսուցիչներն են (բացառությամբ մաթեմատիկական առարկաների), իսկ փոխհատուցման շրջանակը՝ ՀՀ պետական բյուջե: Այս ծրագիրն առնչվում է հանրապետության բոլոր դպրոցների բնագիտական և տեղեկատվական տեխնոլոգիաների ուղղության ուսուցիչներին, որոնց աշխատավարձը 2023 թվականի սեպտեմբերից 25 տոկոսով բարձրացել է:

ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական դպրոցների բոլոր ուսուցիչներին հավելավճար տրամադրելու արդյունքում կանխատեսվում է, որ կհամալրվեն հատկապես արհեստ, արվեստ բնագավառների և ԲՏՃՄ ոլորտի առարկաների ուսուցիչների թափուր տեղերը, ինչպես նաև բոլոր ուսուցիչների համար կապահովվի ֆինանսական որոշակի բարելավում, որովհետև այդ դպրոցներում ուսուցիչներ ըգրեթե 1 դրույք ծանրաբեռնվածություն չեն ունենում: Մասնավորապես, սահմանված ամսական լրավճարը տրվում է մինչև 100 սովորող ունեցող հաստատության մինչև 1,0 դրույք ծանրաբեռնվածություն ունեցող ուսուցիչներին առավելագույնը 0,5 դրույքի չափով՝ մինչև 1,0 դրույքի համար սահմանված դրույքաչափի լրանալը:

Վերոնշյալ երկու ծրագրերի նպատակն է՝ խրախուսել ուսուցիչներին և մոտիվացնել նրանց՝ աշխատել դպրոցական համակարգում:

• *Մանկավարժների և վարչական աշխատողների պատրաստման մասնագիտական կրթական ծրագրերի ու որակավորումների համապատասխանեցում հանրակրթության բովանդակությանը, այդ թվում՝ վերաորակավորման ճկուն մեխանիզմների ներդրմամբ՝*

Հանրակրթության պետական չափորոշիչի ներդրմամբ պայմանավորված՝ մանկավարժների և վարչական աշխատողների պատրաստման մասնագիտական կրթական ծրագրերի շրջանակներում վերապատրաստվել է 3170 տնօրեն և փոխտնօրեն՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: Հանրակրթական ուսումնական հաստատություններում ղեկավար և վարչական անձնակազմի կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների պլանը առկա է, համաձայն որի ԿՁՆԱԿ-ի կողմից իրականացվում են նպատակային միջոցառումներ: Նաև նախատեսված է տնօրենների ատեստավորման նոր մեխանիզմի ներդրում, որն իրականացվելու է կատարողականի տարեկան գնահատման միջոցով:

Մանկավարժական որակավորում շնորհող բուհերը միջոցներ են ձեռնարկել կրթական ծրագրերը հանրակրթության պետական չափորոշչին համապատասխանեցնելու ուղղությամբ: Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը 2024 թվականի 1-ին կիսամյակում կիրականացնի կրթական ծրագրերի վերանայումներ՝ վերջնարդյունքները համապատասխանեցնելով հանրակրթության նոր չափորոշիչներին և ուսուցչին ներկայացվող պահանջներին:

Նպատակ 2.Հանրակրթական ծրագրերի բազմազանության և հասանելիության ապահովում՝ ծառայությունների հասցեական տեղաբաշխման և տրամադրման միջոցով

• *Պարտադիր կրթության համակարգից (ՊՀԿ) դուրս մնացած երեխաների հաշվառման համակարգի արդյունավետ գործարկում՝*

Պարտադիր կրթության համակարգից (ՊՀԿ) դուրս մնացած երեխաների հաշվառման գործընթացն առավել կանոնակարգելու նպատակով, ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1886-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N154-Ն որոշմամբ հաստատված՝ «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգում»: Համաձայն կարգի՝

ա) հանրակրթական ուսումնական հաստատություն (այսուհետ՝ հաստատություն), հանրակրթական հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն (այսուհետ՝ ՆՄՄԿ) չհաճախած կամ հաստատությունում, ՆՄՄԿ-ում հաշվառված չլինելու դեպքում պարտադիր կրթությունից դուրս մնացած անձանց բացահայտելու համար ՀՀ ԿԳՄՍ նախարարության (այսուհետ՝ նախարարություն) «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ԿՏԱԿ) յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբեր և հունվար ամիսներին, համեմատելով բնակչության պետական ռեգիստրի և կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալները, նախարարությանը ներկայացնում է 6-ից մինչև 19 տարին չլրացած այն անձանց տվյալները, որոնք որևէ հաստատությունում, ՆՄՄԿ-ում հաշվառված չեն,

բ)«Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի» մաս կազմող էլեկտրոնային ենթահամակարգի տեղեկատվությունը հասանելի է, և ԿՏԱԿ-ի կողմից համակարգ մուտք գործելու համար, բացի տվյալ հաստատությունից, ՆՄՄԿ-ից, հաշիվներ են տրամադրվում հետևյալ շահագրգիռ և պատասխանատու կառույցներին՝

1) խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ ի դեմս համայնքի ղեկավարի (այսուհետ՝ ԽՀՄ).

2) աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը.

3) կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը.
4) կրթության տեսչական մարմնին.
5) ՀՀ մարզպետների աշխատակազմերին.
6) Միասնական սոցիալական ծառայությանը.
7) ՀՀ ոստիկանությանը:

2023 թվականի դեկտեմբերի դրությամբ պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած՝ հայտնաբերված երեխաների 50%-ից ավելին ներառվել է հանրակրթության մեջ:

Երկարօրյա ծառայություններ են մատուցել դպրոցների 24,2%-ը/340 դպրոց/:

Երկարօրյա ծառայություններից օգտվող սովորողների մասնաբաժինը կազմել է 1,5% /6124 աշակերտ/:

Երկարօրյա ծառայությունների տրամադրման՝ սովորողներին վերաբերող առկա ցուցանիշը պայմանավորված է հաստատություններում դեռևս երեք՝ 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում նոր Չափորոշչի ներդրմամբ, ինչպես նաև ուսուցիչների և հաստատության համար նոր միջոցառում լինելու հանգամանքով: Բացի այդ, հաստատություններում շարունակում է գործել ծնողի դիմումի հիման վրա իրականացվող երկարօրյա ծառայությունը, որը սովորողի կրթական արդյունքի բարելավման խնդրի լուծման ևս մեկ հնարավորություն է:

Չափորոշիչը ամբողջությամբ ներդնելու արդյունքում ցուցանիշները կբարելավվեն:

- *Հանրակրթական ուսումնական հաստատությունների ներառականության ապահովում՝ ֆիզիկական և ուսումնական միջավայրերի հարմարեցման միջոցով՝*

Ուսումնական հաստատությունների ֆիզիկական մատչելիության ապահովման շրջանակներում, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ, ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվել է «Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել է ենթակառուցվածքների փոքրածավալ հարմարեցում ՀՀ Սյունիքի, ՀՀ Լոռու, ՀՀ Շիրակի 27 հանրակրթական դպրոցներում (թեքահարթակներ, հասանելի սանհանգույցներ, ռեսուրս սենյակների վերանորոգում, գույքի և սարքավորումների տրամադրում՝ արտադպրոցական ծառայությունների տրամադրման համար):

Միաժամանակ, 2023 թվականի սեպտեմբերի 1-ից գործում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թ. դեկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցները և նորմատիվները հաստատելու մասին» N79-Ն հրամանը, համաձայն որի՝ համադպրոցական ծախսը ի թիվս այլ ծախսերի, իր մեջ ներառում է՝

հաշմանդամություն ունեցող երեխաների համար ֆիզիկական միջավայրի հարմարեցումների համար նախատեսված ծախսերը, որը հաշվարկվում է երեք տարվա կտրվածքով 3300 հազ. դրամ (յուրաքանչյուր տարի 1100 հազ. դրամ) և տրվում է այն հաստատություններին, որոնք հարմարեցված չեն ներառական կրթությանը կամ ընդգրկված չեն այդ նպատակով ֆինանսավորվող ծրագրերում, ինչպես նաև առաջիկա երեք տարիների ընթացքում չի նախատեսվում հաստատությանն ամրացված անշարժ գույքի հիմնանորոգում,

կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացում խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով տրամադրվող նպատակային ֆինանսավորումը, որը հաշվարկվում է հաստատությունում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների միջին տարեկան թիվը բազմապատկելով 27,0 հազար դրամի:

Միաժամանակ ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է մանկավարժների համար նախատեսված՝ «Արդյունավետ հարմարեցումներ, որակյալ կրթություն» մեթոդական ուղեցույցը,

որը կաջակցի հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժներին համընդհանուր ներառական կրթության իրականացման գործընթացում:

Ընդհանուր առմամբ՝ ֆիզիկական միջավայրի մատչելիություն ապահովող դպրոցների թիվը 57 է (մոտավորապես՝ 4 %): Սակայն հաշվի առնելով, որ նպատակային ֆինանսավորումը ներդրվել է 2023 թվականի սեպտեմբերից, միջավայրային մատչելիության ցուցանիշները ավելի ամբողջական կլինեն 2023-2024 ուսումնական տարվա ավարտին:

- *Հանրակրթական ուսումնական հաստատություններում մանկավարժահոգեբանական ծառայությունների հասանելիության ապահովում՝*

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրմամբ, հանրապետության բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններում առկա են մանկավարժահոգեբանական ծառայություններ, ՀՀ մարզերում գործում են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ: Հանրակրթական դպրոցներում ներդրված են ուսուցչի օգնականի և հոգեբանի հաստիքներ:

Ինչպես նաև «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրով իրականացվել են վերապատրաստումներ՝ 132 դպրոցում 2266 մանկավարժի ընդգրկմամբ: Հոգեբանների և ուսուցչի օգնականների հաստիքների տրամադրումը դպրոցներին կազմում է 100 %:

- *Հանրակրթական ուսումնական հաստատություններին որակյալ խորհրդատվության և աջակցության տրամադրում ռեսուրս-կենտրոնների և մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից՝*

ՀՀ մարզերում գործող տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները (ՏՄԱԿ) հանրակրթական դպրոցներին տրամադրում են անհրաժեշտ խորհրդատվություն և աջակցություն, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվում է ՏՄԱԿ-երի մասնագետների վերապատրաստումներ:

Ինչպես նաև ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ իրականացվում է Երևանի լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրը հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի վերակազմակերպելու մոդելի պիլոտային փորձարկում:

2023 թվականի ընթացքում ՏՄԱԿ-ների կողմից մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ են մատուցվել հանրապետության 1400 ուսումնական հաստատություններում:

- *Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մասնագետների մասնագիտական առաջխաղացման, ներառյալ ատեստավորման, հնարավորությունների ընդլայնում՝ փոխկապակցելով այն աշխատանքի արժանապատիվ վարձատրության մեխանիզմների և մասնագիտական ստանդարտների հետ՝*

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետների ատեստավորման գործընթացն իրականացնելու նպատակով, մշակվել և շրջանառվում է «Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական աշխատողներին հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

- *Հեռավար կրթական ծառայությունների, էլեկտրոնային բաց պաշարների, առցանց դասընթացների ներդրում սովորողների այն խմբերի և դեպքերի համար, երբ առկա ուսուցումը հնարավոր չէ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս ժամանակավորապես բնակվող անչափահասների համար՝*

Ասիական զարգացման բանկի կողմից «Հեռավար կրթություն հանուն դիմակայության» ծրագրի շրջանակներում մշակվել է հեռավար կրթության հարթակ՝ սովորելու ավելի լայն

հնարավորություններ ընձեռելով և տեղեկատվություն տրամադրելով՝ սովորողների համար ավելի հարմար ձևաչափով: Հարթակը օգնում է անցկացնել առցանց դասընթացներ և ուսուցիչներին ու սովորողներին տրամադրում է իրական ժամանակում հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ, հանձնարարությունների տրամադրման և մոնիթորինգի և ուսուցման աշակերտակենտրոն այլ գործիքներ: Հարթակը հնարավորություն է ընձեռում հեռավոր դպրոցների երեխաների համար ապահովել որակյալ կրթության հասանելիությունը: Ներկայում մշակված են հեռավար դասընթացների 24 մոդուլներ, որոնք կիրառվում են հեռավար կրթության հարթակից օգտվող շահառուների կողմից:

Հեռավար ուսուցման 30 մենթոր դպրոցների ծառայություններից օգտվում են 91 հանրակրթական դպրոցներ:

Մենթոր դպրոցների թվի նվազումը պայմանավորված է Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված ուսուցիչների՝ ՀՀ դպրոցներում աշխատանքի տեղավորումով, ինչի շնորհիվ պակասել է հեռավար ուսուցման շահառուների քանակը, իսկ առկա ուսուցումն առավել արդյունավետ է:

Հեռավար դասավանդման վերաբերյալ վերապատրաստված ուսուցիչների թիվը կազմում է շուրջ 15000:

Ապահովված է հեռավար ուսուցման նյութերի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող 10 % սովորողների համար:

- *Մուլտիմեդիա ձևաչափով հայրենագիտական ճանաչողական և տեղեկատվական նյութերի արտադրություն ու տարածում՝*

2023թ. ստեղծվել և տարածվել են մուլտիմեդիա ձևաչափով հետևյալ հայրենագիտական ճանաչողական և տեղեկատվական նյութերը.

✓ «Հումանիտար Ականազերծման և Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (UNDP) համատեղ միջոցներով նկարահանվել և տարածվել է 3 տեղեկատվական տեսահոլովակ՝ նախատեսված դպրոցականների համար՝ 1. Children/ երեխաներ (նախատեսված 6 - 10 դպրոցականների համար). 2. Teenagers/ դեռահասներ (նախատեսված 10-16 տարեկան դպրոցականների համար), 3. Adults/ չափահասներ՝

https://cloud.mail.ru/stock/8Gqrf4S8wwrArJmGWhS3VyUJ

✓ «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2023 թվականի ընթացքում ստեղծվել և տարածվել են.

- **հայրենագիտական նյութ**

https://kznakbnagavar.blogspot.com/2023/10/blog-post_46.html

- **ճանաչողական նյութ**

խաչվող հասկացություններ՝

https://www.youtube.com/watch?v=ZIP6OLFngdY

տեսադասեր հայոց լեզվից՝

https://www.canva.com/design/DAErA1dbnho/kmvlaQqzy0rDp_ZNW5TndQ/view?utm_content=DAErA1dbnho&utm_campaign=designshare&utm_medium=link&utm_source=publishsharelink

տեսադասեր գրականությունից՝

https://kznakbnagavar.blogspot.com/p/blog-page_1.html

- *Ավագ դասարաններում կրեդիտային համակարգի ներդրում, ներառյալ սովորողների նախասիրությունները և կարողությունները խթանող արտադասարանական և արտադպրոցական ծառայությունների զարգացման, դպրոցի և այլ կենտրոնների համագործակցության միջոցով՝*

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թ. հոկտեմբերի 27-ի N39-Ն հրամանով հաստատվել է «Միջնակարգ կրթության կրեդիտային համակարգի ներդրման և գործարկման կարգը»:

Կրեդիտային համակարգի ներդրման նպատակն է հանրակրթական ուսումնական հաստատությունների և բուհերի միջև զարգացնել կրթական միասնական միջավայր, սովորողների համար հանրակրթությունից բուհական համակարգ անցումը դարձնել առավել դյուրին:

Կրեդիտային համակարգի ներդրման հետ կապված խնդիրներն ու քայլերը քննարկելու նպատակով կազմակերպվել է 9 հանդիպում-քննարկում՝ «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» (ԿԶՆԱԿ) հիմնադրամի, ՀՀ բուհերի պատասխանատուների, բուհերին կից դպրոցների, Տավուշի մարզի չորս ավագ և միջնակարգ դպրոցների տնօրենների ու ներկայացուցիչների հետ:

Քննարկումները ծավալվել են մասնագիտությունների անվանումների, առարկայացանկի ու դրանց ժամաքանակի, առարկայական ծրագրերին ներկայացվող լրացուցիչ պահանջների, դպրոցական ծրագրից դուրս առարկայական ծրագրերը մոդուլի տեսքով ներկայացնելու, շնորհվող կրեդիտների, բուհի կողմից սովորողների արտաքին գնահատման սկզբունքների վերաբերյալ:

2023 թվականի դեկտեմբերի 12-ին միջնակարգ կրթության կրեդիտային համակարգի ներդրման և գործարկման նպատակով հանրակրթական 7, այդ թվում՝ բուհերին կից դպրոցների և բուհերի միջև կնքվել են պայմանագրեր: Ավագ դասարաններում փորձնական կարգով ներդրվել է կրեդիտային համակարգը, որի շրջանակներում դպրոցների դպրոցների կրեդիտները ճանաչվելու են բուհերի կողմից: Այս շրջանակներում մասնավորի հետ համագործակցությամբ 16 դպրոցում ներդրվել է Արհեստական բանականության դասընթացը:

Պայմանագրերի կնքումը հնարավորություն կտա ուսումնառության արդյունքների հաշվառման, կուտակման և փոխանցման համակարգը համապատասխանեցնելու ՀՀ գործող կրթական օրենսդրության միջազգային կրթական չափանիշներին, նպաստելու սովորողների մասնագիտական կողմնորոշմանը և հետաքրքրությունների զարգացմանը:

Կարևոր բաղադրիչ է նաև արտադասարանական և արտադպրոցական ծառայությունների մատուցումը դպրոցների կողմից, որն ամրագրված է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրությամբ:

Ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի փետրվարի 24-ի N09-Ն հրամանով հաստատվել է հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում խմբակների, այդ թվում՝ արտադասարանական ուսումնառության և ժամանցի կազմակերպմանն ուղղված խմբակների գործունեության ու երաշխավորման կարգը:

Արտադասարանական և արտադպրոցական ծառայություններ մատուցվել է դպրոցների 40%-ի կողմից:

- *Արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի խրախուսման մեխանիզմների մշակում՝ կամավոր ատեստավորման միջոցով՝*

ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N269-Ն որոշմամբ հաստատվել է «Պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրավճարի տրամադրման կարգը»:

2023 թվականի ապրիլի 29-ին անցկացվել է արտադպրոցական ուսումնական հաստատություններում աշխատող ազատ ոճի և հունահռոմեական ըմբշամարտ, սամբո և ձյուդո մարզաձևերի մարզիչ-մանկավարժների կամավոր ատեստավորումը:

2023 թվականի ապրիլի 30-ին ատեստավորումն իրականացվել է «Դաշնամուր» և «Երաժշտության տեսություն» (սոլֆեջո և երաժշտական գրականություն) առարկաները դասավանդող մանկավարժական աշխատողների համար:

2023 թվականին ատեստավորված մանկավարժական աշխատողներից փաստացի լրավճար են ստանում 43-ը:

• *Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների համար առողջ սնվելու հնարավորությունների ապահովում՝*

Հանրակրթական ուսումնական հաստատություններում աշակերտներին կայուն դպրոցական սննդով ապահովող դպրոցների մասնաբաժինը 2023թ. հասցվել է 86.2%: «Դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում անվճար սնունդ ստանում են շուրջ 135 հազար երեխա՝ ՀՀ մարզերի դպրոցների 1-4-րդ դասարանների աշակերտներ և նախակրթարանների սաներ: Սնունդ ստացող երեխաների մասնաբաժինը հասցված է 70.5%-ի:

Քննարկվում է նաև Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին ծրագրում ներառելու հարցը: Սննդի տրամադրման մեթոդների ճշտման արդյունքում, «Դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում անվճար սննդով կապահովվեն Երևան քաղաքի դպրոցների շուրջ 55371 աշակերտ:

Նպատակ 3.Հանրակրթական ուումնական հաստատություններում անվտանգ, հագեցած և արդիական սովորելու միջավայրի և ռեսուրսների ապահովում

• *Հանրակրթական ուսումնական հաստատությունների նպատակային քարտեզի կազմում՝ ներառյալ հաստատությունների տեղաբաշխումը և շենքային պայմանների գնահատումը՝ հիմնվելով Կապան խոշորացված համայնքի փորձնական ծրագրի արդյունքների վրա՝*

Առկա է հանրակրթական ուսումնական հաստատությունների նպատակային քարտեզ բոլոր մարզերի և Երևան քաղաքի համար: Հանրակրթական ուսումնական հաստատությունների տեղաբաշխման ցանկերը հաստատվել են՝

ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 6-ի N491–Ն որոշմամբ՝ Սյունիքի մարզ, ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 4-ի N682 –Ն որոշմամբ՝ Արարատի և Կոտայքի մարզեր,

ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 25-ի N823 –Ն որոշմամբ՝ Արագածոտնի, Գեղարքունիքի, Արմավիրի մարզեր,

ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 16-ի N977 –Ն որոշմամբ՝ Վայոց Ձորի, Տավուշի մարզեր, Կապանի 4 դպրոց,

ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N1140-Ն որոշմամբ՝ Լոռու, Շիրակի մարզեր,

ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N2093-Ն որոշմամբ՝ Երևան քաղաք:

• *Համաձայն գնահատված արդյունքների՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, այդ թվում՝ սեյսմիկ անվտանգության ապահովում, փոքրաքանակ աշակերտական համակազմ ունեցող բնակավայրերում մոդուլային դպրոցական շենքերի կառուցում, ըստ անհրաժեշտության՝ հիմնանորոգման, վերակառուցման և վերանորոգման այլ աշխատանքներ՝*

2023 թվականին կառուցվել, հիմնանորոգվել և վերանորոգվել է 29 դպրոց: Շինարարության փուլում է գտնվում 42 դպրոց/կրթահամալիր: Նախագծանախահաշվարկային փուլում է գտնվում 18 դպրոց:

• *Հանրակրթական ուսումնական հաստատություններում աղետների դիմակայունության և ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու պայմանների ապահովում և կարողությունների զարգացում՝*

Հանրակրթական ուսումնական հաստատությունների 33%-ում իրականացվել են հաստատված աղետների ռիսկերի կառավարման պլանի 100%-ը:

Աղետների ռիսկի կառավարման և ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու վերապատրաստման դասընթացներին մասնակցած աշխատակիցների մասնաբաժինը կազմել է 36%:

Թաքստոցներ/ապաստարան ունեցող դպրոցների մասնաբաժինը կազմել է 29%:

- *Նոր չափորոշչին և առարկայական ծրագրերին համապատասխան՝ անհրաժեշտ գույքով և սարքավորումներով հագեցվածության ապահովում՝*

ՀՀ ԿԳՄՍՆ ենթակայության 107 ավագ դպրոցները, հանրակրթական պետական չափորոշչի ներդրման շրջանակներում ՀՀ Տավուշի մարզի բոլոր 80 դպրոցներ համալրվել են ժամանակակից բնագիտական լաբորատորիաներով: Ժամանակակից բնագիտական լաբորատորիաներով և անհրաժեշտ գույքով համալրված են նաև ՀՀ Արմավիրի մարզի 100, ՀՀ Արագածոտնի մարզի 4 դպրոցներ: Երևանում և ՀՀ մարզերում գտնվող ևս 24 դպրոցներ ապահովվել են անհրաժեշտ գույքով: 38 ավագ դպրոցում գործարկվել են ֆաբլաբեր:

Նպատակ 4.Հանրակրթական հաստատությունների շախսարդյունավետ կառավարման և ֆինանսավորման մոդելների ներդրում

- *Հանրակրթական ուսումնական հաստատությունների բովանդակային և վարչատնտեսական կառավարման գործառույթների տարաբաժանում և առանձնացված իրականացում՝*

2023թ. վարչատնտեսական կենտրոնացված կառավարման անցած դպրոցների թիվը ավելացել է ևս 7-ով: Ներկայում վարչատնտեսական կենտրոնացված կառավարման անցած դպրոցների ընդհանուր թիվը կազմում է 170: Դպրոցներում բովանդակային և վարչատնտեսական կառավարման տարանջատման արդյունքում նշանակվել է 50 տնօրեն և 97 վարչատնտեսական համակարգող:

- *Հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների խոշորացում՝*

Հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման նոր մոդելի ներդրման գործընթացին զուգընթաց վերանայվում է կառավարման խորհուրդների ձևավորման կարգը՝ ծնողներին կրթական գործընթացում ներգրավելու արդյունավետ մեխանիզմներ ներդնելու, դաստիարակության գործառույթի պատշաճ իրականացման, արդյունավետ կառավարման, խորհուրդների անդամների մասնակցայնության, հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմների ապահովման նպատակով: Կառավարման խորհուրդների խոշորացումը էականորեն կապված է համայնքների խոշորացման, ինչպես նաև կրթական կլաստերների, կրթամիամալիրների ստեղծման գործընթացի հետ:

2023թ. դրությամբ հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների թիվը հետևյալն է՝ 611 առանձին խորհուրդ, 293 միացյալ խորհուրդ:

- *Հանրակրթական հաստատությունների կառավարման լիազորությունների պատվիրակում տեղական ինքնակառավարման մարմիններին՝*

Հանրակրթական հաստատությունների կառավարման լիազորությունները տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակելու նպատակով նախաձեռնվել է համագործակցություն «Սալար Ինթերնեշնլ» կազմակերպության հետ: Հանրակրթական հաստատությունների կառավարման լիազորությունները տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակելու ուղղությամբ, ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 26-ի N790-Լ որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի գյուղական բնակավայրերում կրթական որակյալ ծառայությունների հասանելության ապահովման փորձնական ծրագրի» օրինակով (Սյունիքի, Արծվանիկի, Նորաշենիկի, Եղվարդի, Գեղանուշի, Սրաշենի, Աճանանի դպրոցներ), ՀՀ Սյունիքի մարզում ստեղծվել է Վաղատինի կրթահամալիրը, որը ներառում է Վաղատինի, Որոտանի(Սիսիան), Լծենի, Շամբի դպրոցները:

Այսպիսով, «Աջակցություն ՀՀ-ում ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման մարմինների բարեփոխումների» ծրագրի շրջանակներում ներառվելու է 10 համայնք:

- *Դպրոցների ֆինանսավորում կարգի փոփոխություն՝ անցում կատարելով դասարանների թվով ֆինանսավորմանը և կրթության առանձահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նպատակային արդյունավետ ֆինանսավորմանը՝*

ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոնի 31-ի N1485-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի N 1481-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգի մեջ: Նոր կարգն ուժի մեջ է մտել 2023 թվականի սեպտեմբերի 1-ից և տարածվում է ՀՀ կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրում չներառված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա: Միաժամանակ այս խմբի հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա տարածվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի N79-Ն հրամանով հաստատված ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցները և նորմատիվները: Համաձայն հրամանի, համադպրոցական ծախսը ի թիվս այլ ծախսերի, իր մեջ ներառում է՝

- հաշմանդամություն ունեցող երեխաների համար ֆիզիկական միջավայրի հարմարեցումների համար նախատեսված ծախսերը, որը հաշվարկվում է երեք տարվա կտրվածքով 3,300.0 հազ. դրամ (յուրաքանչյուր տարի 1,100.0 հազ. դրամ) և տրվում է այն հաստատություններին, որոնք հարմարեցված չեն ներառական կրթությանը կամ ընդգրկված չեն այդ նպատակով ֆինանսավորվող ծրագրերում, ինչպես նաև առաջիկա երեք տարիների ընթացքում չի նախատեսվում հաստատությանն ամրացված անշարժ գույքի հիմնանորոգում: Այդ հաստատությունների ցանկը կազմելու նպատակով ներկայումս իրականացվում են ուսումնասիրություններ և քննարկումներ, որոնց արդյունքները կտրամադրվեն հաստատության կառավարումն իրականացնող լիազոր մարմիններին,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացում խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով տրամադրվող նպատակային ֆինանսավորումը, որը հաշվարկվում է հաստատությունում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների միջին տարեկան թիվը բազմապատկելով 27 հազար դրամի:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացում խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով տրամադրվող նպատակային ֆինանսավորումը ևս ինքնաշխատ կերպով կհաշվարկվի կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (emis.am)՝ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման պլանավորման ենթահամակարգի միջոցով՝ հիմք ընդունելով հաստատությունում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մասին համակարգում առկա թիվը:

Իսկ երկրորդ խմբի՝ ՀՀ կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրում ընդգրկված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվելու է ֆինանսավորման հին՝ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N1262-Ն որոշմամբ սահմանված կարգով:

ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 1. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության (ՆՄՄԿ) բովանդակության և մասնագիտական ներուժի արդիականացում ու հզորացում՝ աշխատաշուկայի և ժամանակից մասնագիտական պահանջներին համահունչ:

- 2023 թվականին մշակվել և փորձարարական ներդվել է աշխատանքի վրա հիմնված ուսուցման (դուալ) համակարգ՝ 4 գյուղատնտեսական մասնագիտություններով: Գործընթացը շարունակական է: Ընդհանուր առմամբ, այս մոդելը ներդրված է գյուղատնտեսության, ՏՏ, գինեգործության, զբոսաշրջության, ճշգրիտ ճարտարագիտության, լոգիստիկայի ոլորտների 24 մասնագիտությամբ: Դուալ մոդելով իրականացվող մասնագիտությունների մասնաբաժինը 2023 թվականին կազմել է 15%, իսկ ուսումնական հաստատություններինը՝ 18.3%:

- ՀՀ ԿԳՄՍՆ-ի և Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հետ համատեղ իրականացվող՝ «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» ծրագրի աջակցությամբ, ամբողջությամբ լրամշակվել է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը՝ այն վերանվանելով «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ օրենքի: Լրամշակվել է նաև հարակից օրենքների նախագծերի փաթեթը: Վերջինս հավանության է արժանացել ՀՀ կառավարություն 2023 թվականի նոյեմբերի 9-ի 1920-Ա որոշմամբ:

- Վերանայվել է ոլորտի կրթաթոշակային քաղաքականությունը. տնտեսության համար գերակա ճյուղերի մասնագիտությունների նկատմամբ երիտասարդների հետաքրքրության բարձրացման նպատակով՝ գյուղատնտեսություն, արդյունաբերություն և շինարարություն ուղղություններով կրթություն ստացող ուսանողների համար սահմանվել է ամսական 50000 ՀՀ դրամ կրթաթոշակ՝ խթանելով այս մասնագիտություններով ընդունելության աճը:

- Ընթացքում է ՆՄՄԿ հաստատությունների վերակազմակերպման և դրանցում ուսուցանվող մասնագիտությունների ու որակավորումների վերանայման գործընթացը՝ նպատակ ունենալով ներդնել մարզի զարգացման առանձնահատկություններին և աշխատաշուկայի կարիքներին համապատասխան մասնագիտություններ, և փակել այն ուսուցանվող կամ կրկնվող մասնագիտությունները, որոնք այլևս արդիական չեն տնտեսության և աշխատաշուկայի համար:

- Մշակվել, վերանայվել և հաստատվել են 18 մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներ, մշակվել են նաև դրանց մոդուլային ծրագրերը, որոնք 2024-2025 ուսումնական տարում փորձնական կներդրվեն ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում: Վերանայվել են 12 մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներ, որոնք հաստատվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններով: 2023թ. դրությամբ մշակված և վերանայված կրթական չափորոշիչների ընդհանուր թիվը 362 է:

- Վերանայման փուլում է ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի պետական հավատարմագրման կարգը»: Ներկայում հավատարմագրման գործընթաց անցած հաստատությունների մասնաբաժինը՝ 25.7% է:

- Մշակվել և շահագրգիռ մարմիններին է ներկայացվել «Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման հանձնաժողովների ձևավորման, դրանց

գործունեության և ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների վերապատրաստման և ատեստավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի նախագիծը (վերապատրաստման ու ատեստավորման գործընթացի իրականացումը նախատեսված է 2024 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակներում՝ ըստ ընտրված մասնագիտական ուղղությունների):

- Մասնավոր ոլորտի մասնագետներին գործնական դասավանդման գործընթացում ներգրավելու նպատակով՝ «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ օրենքի նախագծով արմատապես վերանայվել են մասնագիտական կրթության և ուսուցման (այսուհետ՝ ՄԿՈՒ) չափորոշիչների և կրթական ծրագրերի իրականացման մեթոդաբանական հիմքերը, որակի ապահովման ու վերահսկողության կառուցակարգերը՝ նախատեսելով նաև ՄԿՈՒ ոլորտում անցում որակավորումների ազգային շրջանակի և որակավորումների ոլորտային շրջանակի: Հարակից նախագծերի փաթեթով կարգավորումներ են սահմանվել ՄԿՈՒ համակարգի գործունեության, ոլորտի կառավարման ու ֆինանսատնտեսական հարաբերությունների, ինչպես նաև դրանց մասնակից իրավաբանական և ֆիզիկական անձանց, այդ թվում՝ սոցիալական գործընկերների իրավունքների ու պարտականությունների մասով:

- «ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում կառավարման «պետություն-մասնավոր» համագործակցության մոդելների փորձարկում և ներդրում» միջոցառման շրջանակներում, համագործակցելով Ֆրանսիայի հայկական հիմնադրամի հետ, «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը վերակազմավորվել է «Տավուշի Պատրիկ Տէվեճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի (ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 14-ի թիվ 1086-Ա որոշմամբ), որի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմում ընդգրկվել են պետության և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ: Հիմնադրամում ներդրվել են գյուղատնտեսության ոլորտի նոր մասնագիտություններ, ինչպես նաև՝ իրականացվել վերանորոգման աշխատանքներ, հատկացվել համապատասխան նյութատեխնիկական բազա:

Նպատակ 2. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության (ՆՄՄԿ) ընդլայնում և մատչելի, ներառական, անվտանգ միջավայրի զարգացում ու հասանելիության ապահովում բնակչության բոլոր խմբերի համար

- 13 քոլեջում ընթանում են շենքային պայմանների բարելավման աշխատանքներ: 7 քոլեջ համալրվել է նոր գույքով, 5 հաստատություն միավորվել է:
- ՆՄՄԿ հաստատությունների նյութատեխնիկական բազայի համալրման և արդիականացման շրջանակում, 2 ուսումնական հաստատության համար տրամադրված դրամաշնորհի կատարումն իրականացված է ողջ ծավալով: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ համագործակցության շրջանակում, 3 ուսումնական հաստատությունների տրամադրվել են «Եռակցման աշխատանքներ» ուսումնալաբորատոր սարքավորումներ: ՆՄՄԿ հաստատությունների մասնաբաժինը, որտեղ առկա է արդիականացված նյութատեխնիկական և/կամ ուսումնալաբորատոր բազա, 6.2% է:
- Մարզերում գործող ՆՄՄԿ հաստատությունների սովորողների և մանկավարժական աշխատողների տրանսպորտային փոխհատուցման գործիքակազմի ներդրում: ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023թ. դեկտեմբերի 12-ի N147-Ն հրամանով հաստատվել է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ուսանողներին և մանկավարժական աշխատողներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցելու կարգը», որը կգործի 2024թ հունվարի 1-ից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 1. Համընդհանուր ներառական, սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում

• Բարձրագույն ուսումնական հաստատությունների առնվազն 20%-ն ապահովված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար նվազագույն անհրաժեշտ ֆիզիկական միջավայրի խելամիտ հարմարեցումներով (թեքահարթակ, սանհանգույց, վերելակ և այլն):

• 2022-2023 թվականների ընթացքում մշակվել և հաստատվել են բարձրագույն ուսումնական հաստատություններում ակադեմիական կազմի պաշտոնների համալրման, մասնագիտական առաջխաղացման, ինչպես նաև ատեստավորման և վերապատրաստման նոր պահանջներ ու մեխանիզմներ, մասնավորապես.

o Մշակվել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման 2023-2026թթ. ծրագիրը, լրավճարների հաշվարկման և վճարման կարգը:

o Վերանայվել է «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի աշխատողների պարգևատրման, նյութական խրախուսման, հավելավճարների և լրավճարների տրամադրման կանոնակարգը:

o Մշակվել է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի գիտական գործունեության համար լրավճարների կարգը:

o Մշակվել է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ակադեմիական կազմի գործունեության և վարկանիշավորման կարգը:

• Բարձրագույն ուսումնական հաստատությունների (այդ թվում՝ գիտակրթական կազմակերպությունների հետ համատեղ օգտագործման) լաբորատոր և նորարարական ենթակառուցվածքների ու միջբուհական, միջառարկայական փորձարարական թեմատիկ լաբորատորիաների և գիտակրթական ամբիոնների արդիականացման ու համալրման նպատակով՝ «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի՝ «Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացմանը» բաղադրիչի շրջանակում, ԲՏՃՄ (STEM) ուղղություններով ընդունվել է 5, մասնավորապես՝

o Երևանի պետական համալսարանի և ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ կոնսորցիում (նախատեսում է ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետում ստեղծել Օպտիկական համակարգերի միկրոմշակման և հետազոտման գիտակրթական նորարար կենտրոն, որի նպատակն է՝ համալսարանական կրթության հետազոտական բաղադրիչի զարգացումը, միջգիտակարգային հետազոտությունների խթանումը, բարձր տեխնոլոգիաների բնագավառի կադրերի պատրաստումը, ինչպես նաև ՀՀ գիտության, կրթության և արդյունաբերության միջև նոր կապերի ձևավորումը):

o Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (նախատեսում է ինժեներական համակարգերի մոդելավորման, նախագծման և կառավարման համապատասխան կրթական ծրագրերի դասավանդման-ուսումնառության կատարելագործմանը, գիտահետազոտական գործունեության զարգացմանը և առևտրայնացմանը (կրթություն-գիտություն-բիզնես կապի ամրապնդում), կրթական գործընթացում գիտահետազոտական աշխատանքների ներգրավմանը, խելացի լուծումների կիրառմանը և բուհի ուսումնագիտական գործառույթների ընդլայնմանն ու կարողությունների հզորացմանը միտված առկա լաբորատոր բազայի համալրում՝ միջառարկայական կիրառություն ունեցող նորագույն փորձասարքերով):

o Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան և ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լ.Ա.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի կոնսորցիում (նախատեսում է ստեղծել ուղեղի վիզուալիզացիայի լաբորատորիա, որը միավորելով գերժամանակակից մանրադիտարկման, բջջային հաշվարկի, լրացված ու վիրտուալ իրականության առանձնահատկություններ, հնարավորություն կընձեռի համակողմանիորեն պատկերավորել գլխուղեղի բջջային ճարտարագիտությունը՝ համալրելով այն զգայական ներգրավվածությամբ. լաբորատորիան օժտված կլինի գլխուղեղի բջիջների ստատիկ և դինամիկ «5D» պատկերման, ինչպես նաև դեղի կամ ներմուծված բջջի «առաքումը» գլխուղեղ վիզուալիզացնելու հնարավորությամբ):

o Հայաստանի ազգային ագրարային համալսարան (նախատեսում է «Գյուղատնտեսական ռոբոտաշինության և մեխատրոնիկայի ագրարային ճարտարագիտության գերազանցության կենտրոնի» ստեղծում, որը կներառի Գյուղատնտեսական ռոբոտների (ագրոբոտեր) մշակման և նախագծման լաբորատորիա, AgrobotLAB, Ծրագրավորման լաբորատորիա՝ ITLab, Ագրարային ճարտարագիտության վերազինված և նոր ուսումնական լսարաններ և լաբորատորիաներ):

o Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան (նախատեսում է զարգացնել ԲՏՃՄ ոլորտում սովորող ապագա մանկավարժների (ուսանողների) և գործող ուսուցիչների ուսուցչամեթոդական, հետազոտական, և ստեղծագործական հմտությունները՝ ստեղծելով նյութատեխնիկապես հագեցած գերազանցության կենտրոն, որն իր մեջ կներառի և կկոորդինացնի ՀՊՄՀ-ում գործող ֆիզիկայի, կենսաքիմիայի, տեխնոլոգիայի, ինֆորմատիկայի լաբորատորիաները, կհիմնվի գիտական միջոցառումների և վերապատրաստման ժամանակակից սրահ, մասնագիտական կողմնորոշման և նախնական փորձառության ձևավորման լսարան, վիրտուալ մասնագիտական փոխգործակցության համացանցային հարթակ):

- Առաջին անգամ ընդունելության քննություններն անցկացվել են երկու փուլով՝ նվազեցնելով քննական սթրեսը և լարվածությունը, ինչպես նաև հնարավորություն ընձեռելով դիմորդներին լավագույնս դրսևորել իրենց կարողությունները:

- 2023-2024 ուսումնական տարում գործարկվել են բուհերում կրթաթոշակի նոր մոտեցումները. պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող մասնագիտությունների համար սահմանվել է ամսական 70000-77000 ՀՀ դրամ կրթաթոշակ՝ նախկինում գործող 5000-6500 ՀՀ դրամի փոխարեն: Կրթաթոշակի նոր մոտեցումը ներդրվել է ԲՏՃՄ մանկավարժական ծրագրերով սովորողների համար՝ հանգեցնելով մագիստրատուրայում սովորողների թվի գրեթե կրկնապատկման:

- ԲՏՃՄ մասնագիտությունների գծով 2023-2024 ուստարվա համար լրացուցիչ 100 տեղով ավելացվել է բակալավրի կրթական ծրագրով ընդունելության համար նախատեսվող պետության կողմից ֆինանսավորվող տեղերի թիվը՝ կազմելով պետական ֆինանսավորմամբ տեղերի ավելի քան 55%-ը:

- Ներդրվել է ԲՏՃՄ ուղղությամբ ՀՀ բուհերում սովորող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման համակարգը, որի շրջանակներում տարկետում է ստացել 105 ուսանող: Այդ ուղղություններով պետական պատվերով ընդունելությունն աճել է 17,3%-ով, այն պարագայում, երբ նախկինում տեղերը չէին համալրվում:

- Մշակվել է ՀՀ բուհեր օտարերկրյա քաղաքացիների փաստաթղթերի ընդունելության և հաշվառման էլեկտրոնային հարթակը, որի շահագործումը նախատեսվում է 2024-2025 ուսումնական տարում:

Նպատակ 2. Բարձրագույն կրթության արդյունավետության բարձրացում

• ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի նոյեմբերի 23-ի N 79-Լ հրամանով հաստատվել են բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության՝ կատարողականի արդյունքային ցուցանիշները (KPI), հետևյալ 7 ուղղությունով՝

o Կրթական ծրագրեր/Կրթության կազմակերպում,

o Գիտահետազոտական/ստեղծագործական աշխատանք,

o Մարդկային ռեսուրսների զարգացում և առաջխաղացում (մասնագիտական առաջընթաց),

o Կառավարում, ներքին միջավայր և ենթակառուցվածքներ,

o ԲՈՒՀ-աշխատաշուկա համագործակցություն,

o Համագործակցություն կրթական հաստատությունների միջև,

o Միջազգայնացում և ծրագրային արդյունքերով ֆինանսավորման մեխանիզմներ, դրանց կիրառման մեթոդական ուղեցույց:

Նախատեսվում է բուհերի ֆինանսավորման նոր բանաձևի մշակում, կատարողականի արդյունքային ցուցանիշների (KPI) բաղադրիչի ներառմամբ՝ ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրում (2025 թվականին առնվազն 3 բուհերում):

• Բարձրագույն ուսումնական հաստատությունները միջոցներ են ձեռնարկել կրթության կազմակերպման և կառավարման էլեկտրոնային հարթակներ ներդնելու ուղղությամբ. բուհերի առնվազն 50%-ում դրանք ներդրված են:

• «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում մշակվել և հաստատվել է ծրագրի հայեցակարգը (ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 19-ի N 1802-Լ որոշմամբ), մեկնարկել են գլխավոր հատակագծի մշակման աշխատանքները՝ գերմանական ճարտարապետական ընկերության կողմից:

Հուշագիր է կնքվել Լոնդոնի արվեստների համալսարանի հետ՝ ակադեմիական քաղաքի արվեստների կլաստերի կառավարման համակարգի և ծրագրային բովանդակության ձևավորման հարցում համագործակցության նպատակով և Մյունխենի տեխնիկական համալսարանի հետ՝ տեխնոլոգիական կլաստերի շուրջ համագործակցության համար:

Մեկնարկել է բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների միավորման հայեցակարգերի մշակումը:

ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 1. Ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչման մեխանիզմների ներդրում, մեծահասակների և երիտասարդների ցկյանս ուսումնառության և մարդկային կապիտալի շարունակական զարգացման միջավայրի ու պայմանների ապահովում

• Ոչ ֆորմալ կրթության և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման գործընթացն ապահովող ենթաօրենսդրական ակտերը մշակելու նպատակով՝ իրականացվել են հետազոտություններ: Ենթաօրենսդրական ակտերի մշակման նախապատրաստական աշխատանքները ավարտված են, և դրանք գտնվում են մշակման փուլում:

• Վիճակագրական տվյալներ հավաքագրելու իրավական հենքերի մշակման աշխատանքները շարունակվում են: Գործընթացի իրականացման շարունակությունն ապահովելու համար աշխատանքներ են իրականացվում գործընկեր կազմակերպությունների հետ:

- Ոչ ֆորմալ կրթության (ներառյալ՝ երիտասարդների ու մեծահասակների ուսումնառության և կրթության) իրազեկվածության բարձրացման նպատակով՝ 2023 թվականին իրականացվել է 2 հանրային արշավ:

ՍՓՅՈՒՌՔ

Նպատակ 1. Նպաստել հայոց լեզվի տարածմանը, հայկական մշակույթի հանրահռչակմանը օտար երկրներում, ներդնել Սփյուռքում կրթության զարգացմանը նպաստող մեխանիզմներ

- Շարունակվել է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ օտարերկրյա համալսարաններում հայերենի և այլ հայագիտական առարկաների դասավանդումը: 2023թ. հայագիտական կենտրոններ են ստեղծվել Թրակիայի Դեմոկրիտ համալսարանում (Հունաստան) և Սինալոայի համալսարանում (Մեքսիկա)՝ այդպիսով արտերկրի հայագիտական կենտրոնների թիվը հասցնելով 15-ի 12 պետությունում:
- Խորհրդաժողովներ են կազմակերպվել Զալցբուրգի և Իտալիայի Կա՛Ֆոսկարի համալսարաններում: Ապահովվել է առցանց ձևաչափով մասնակցություն:
- Սփյուռքում մանկավարժական, մասնագիտական հմտությունների զարգացման նպատակով՝ 2023 թվականին վերապատրաստվել է 69 սփյուռքահայ ուսուցիչ 18 երկրից:
- Սփյուռքի կրթօջախներին դասագրքեր և ուսումնամեթոդական գրականություն տրամադրելու նպատակով՝ ձեռք է բերվել ավելի քան 38000 կտոր գրականություն, որոնցից՝ Սփյուռքի շուրջ 20 երկրի 220 կրթօջախի տարվա ընթացքում տրամադրվել է շուրջ 26700 կտոր գրականություն:
- Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել է Համահայկական նկարչական մրցույթ-փառատոն, որին մասնակցել է 927 երեխա՝ Հայաստանից և 8 երկրից:

ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԸ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑ

- **Բոլոր բնակավայրերում հասանելի կլինեն մատչելի նախադպրոցական ծառայություններ**



- **3-5 տարեկանների առնվազն 95%-ն ընդգրկված կլինի նախադպրոցական ծառայություններում**



Հարակից ցուցանիշներ, որոնք նպաստում են սույն վերջնարդյունքի իրականացմանը	2023թ.
Նոր ներդրված այլընտրանքային ծառայությունների/համայնքների թիվ	27
Նոր ստեղծված նախակրթարանների/համայնքների թիվ	29
«500 մանկապարտեզի կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման ծրագիր»-ի շրջանակում ավարտված շինարարական աշխատանքներ	145 հաստատությունում (90-ում՝ ընթացքի մեջ)

- **Բոլոր դպրոցները համալրված կլինեն որակավորված և սահմանված ստանդարտներին համապատասխան ատեստավորված մանկավարժներով, որոնք կստանան արժանապատիվ վարձատրություն.**

Հանրակրթության ոլորտում կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների թիվը 2023 թվականին նախորդ տարվա նկատմամբ կրկնապատկվել է, իսկ 2021-2023թթ. կամավոր ատեստավորումը հաղթահարած 3793 ուսուցիչների 94.5%-ը ստանում է հավելավճար:



- **Մանկավարժի գործունեությունը կլինի պատշաճ վարձատրվող և հասարակական հեղինակություն վայելող մասնագիտություն.**



- **Ոչ մի երեխա դուրս չի մնա պարտադիր կրթության համակարգից**

«Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգ»-ին համաձայն՝ 2023 թվականից մեկնարկել է էլեկտրոնային համակարգի գործարկումը.

տարեվերջի դրությամբ հանրակրթական ուսումնական հաստատություններ է ուղղորդվել պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած և *հայտնաբերված երեխաների* ավելի քան 50%-ը:

- **Ուսումնառության արդյունքներ/ուսումնառության տևողություն հարաբերակցությունը 8,3-12 տարի հարաբերակցությունից կհասցվի 11,5-12 տարի հարաբերակցության**

Հանրակրթության նոր չափորոշչի՝ Տավուշի մարզում երկու տարվա փորձարկման արդյունքում գրանցվել է ուսումնառության արդյունքի ավելացում 6 ամսով:

- **Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգը ձեռք կբերի միջազգային հեղինակություն, որի շնորհիվ օտարերկրյա ուսանողների թիվն առնվազն կկրկնապատկվի**

2023-2024 ուսումնական տարում ՀՀ բուհերում սովորել է 8333 օտարերկրյա ուսանող, աճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 8,4%: